

**1.6. Մասնավորեցում**

2012թ. հուլիսի 1-ի դրությամբ մասնավորեցվել 1312 օբյեկտ և կազմակերպություն (ընկերություն), ընդ որում՝ 1171 «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտներ ու վարձակալված տարածքներ, 71 կազմակերպություն և 70 կազմակերպությունների կազմից առանձնացված կառուցվածքային միավորներ: Նշված օբյեկտների մասնավորեցումից մուտքերը կազմել են 1899.1 մլն դրամ, որից 19.6 մլն դրամը մուտքագրվել է 2012թ. հունվար-հունիսին: Բյուջե մուտքագրված գումարների գերակշռող մասը բաժին է ընկնում ընկերությունների մասնավորեցումից մուտքերին՝ 53.5 տոկոսը և կազմում է 1016.4 մլն դրամ:

*Մասնավորեցման ընթացքում պետական և համայնքների բյուջեներ կատարված նուծումների մասին*

	Ընդամենը	1995-2005թթ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ. հունվար-հունիս
<b>Ընդամենը</b>	<b>1899.1</b>	<b>1385.9</b>	<b>251.8</b>	<b>49.2</b>	<b>65.8</b>	<b>28.4</b>	<b>51.7</b>	<b>46.7</b>	<b>19.6</b>
<i>այդ թվում՝</i>									
Կազմակերպություններ (ընկերություն)	1016.4	790.0	183.9	13.6	13.1	4.2	5.2	2.2	4.2
Կազմակերպությունների (ընկերություն) գույքի կազմից առանձնացված կառուցվածքային միավորներ	178.6	101.3	14.5	4.6	25.7	6.2	8.1	13.0	5.2
«Փոքր», կիսավեր ու վարձակալված տարածքներ	669.4	477.2	38.0	31.0	25.9	17.2	38.4	31.5	10.2
Անավարտ շինարարության օբյեկտներ	34.7	17.4	15.4	-	1.1	0.8	-	-	-

**1.6.1. «Փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների ու վարձակալված տարածքների մասնավորեցում**

2012թ. հուլիսի 1-ի դրությամբ մասնավորեցվել է «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների ու վարձակալված տարածքների 1171 օբյեկտ կամ կառավարության ծրագրով մասնավորեցման հաստատված օբյեկտների 99.1 տոկոսը:

*Մասնավորեցված օբյեկտները 2012թ. հուլիսի 1-ի դրությամբ*

Ընդամենը	Օբյեկտների քանակն ըստ ծրագրի	Գնահատված օբյեկտների		Մասնավորեցված օբյեկտների		Մասնավորեցման կատարողականը, %
		քանակը	արժեքը (մլն դրամ)	քանակը	արժեքը (մլն դրամ)	
<b>Ընդամենը</b>	<b>1182</b>	<b>1223</b>	<b>1193.7</b>	<b>1171</b>	<b>1087.1</b>	<b>99.1</b>
<i>այդ թվում՝</i>						
«Փոքր» օբյեկտներ	294	299	188.4	290	187.2	98.6
<i>որից՝</i>						
առևտուր	162	167	136.8	161	136.0	99.4
հանրային սնունդ	19	19	12.3	18	12.2	94.7
կենցաղսպասարկում	113	113	39.3	111	39.0	98.2
Անավարտ շինարարության օբյեկտներ	13	14	51.1	13	45.6	100.0
Վարձակալված տարածքներ	252	252	171.0	252	171.0	100.0
Համայնք	430	444	245.9	426	232.5	99.1
Կիսավեր օբյեկտներ	135	155	270.8	133	194.8	98.5
Այլ	58	59	266.5	57	256.0	98.3

Մասնավորեցման կատարողականի առավել ցածր մակարդակ դիտվել է այլ և կիսավեր օբյեկտների մասնավորեցման գործընթացներում՝ համապատասխանաբար 98.3 և 98.5 տոկոս:

Հանրապետությունում «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների ու վարձակալված տարածքների մասնավորեցված 1171 օբյեկտներից 546-ը կամ 46.6 տոկոսը մասնավորեցվել է վարձակալների կողմից, 224-ը կամ 19.1 տոկոսը՝ աճուրդի միջոցով, 192-ը կամ 16.4 տոկոսը՝ ուղղակի վաճառվել է նախօրոք հայտնի գնորդին, 168-ը կամ 14.4 տոկոսը՝ աշխատանքային կոլեկտիվների կողմից, 40-ը կամ 3.4 տոկոսը՝ ուղղակի անհատույց տրամադրման ձևով և 1-ը կամ 0.1 տոկոսը՝ մրցութային վաճառքի ձևով:


Մասնավորեցման ընթացքն ըստ մասնավորեցման ձևերի  
2012թ. հուլիսի 1-ի դրությամբ

	Ընդամենը		Աշխատանքային կոլեկտիվին		Վարձակալին		Ուղղակի վաճառք նախօրոք հայտնի գնորդին		Ուղղակի անհատույց տրամադրում		Աճուրդ		Մրցութային վաճառք	
	քանակ	արժեք (մլն դրամ)	քանակ	արժեք (մլն դրամ)	քանակ	արժեք (մլն դրամ)	քանակ	արժեք (մլն դրամ)	քանակ	արժեք (մլն դրամ)	քանակ	արժեք (մլն դրամ)	քանակ	արժեք (մլն դրամ)
<b>Ընդամենը</b>	<b>1171</b>	<b>1087.1</b>	<b>168</b>	<b>70.9</b>	<b>546</b>	<b>312.6</b>	<b>192</b>	<b>346.8</b>	<b>40</b>	<b>242.2</b>	<b>224</b>	<b>109.8</b>	<b>1</b>	<b>4.8</b>
այդ թվում՝														
«Փոքր» օբյեկտներ որից՝	290	187.2	168	70.9	-	-	16	44.5	1	4.9	105	66.9	-	-
առևտուր	161	136.0	84	44.9	-	-	8	37.9	1	4.9	68	48.3	-	-
հանրային սնունդ	18	12.2	8	5.5	-	-	2	2.4	-	-	8	4.3	-	-
կենցաղապասարկում	111	39.0	76	20.5	-	-	6	4.2	-	-	29	14.3	-	-
Անավարտ շինարարության օբյեկտներ	13	45.6	-	-	-	-	7	39.4	1	3.9	5	2.3	-	-
Վարձակալված տարածքներ	252	171.0	-	-	240	153.0	3	12.1	1	1.2	8	4.7	-	-
Համայնք	426	232.5	-	-	306	159.6	74	51.5	13	11.4	33	10.0	-	-
Կիսավեր օբյեկտներ	133	194.8	-	-	-	-	54	112.3	11	57.4	68	25.1	-	-
Այլ	57	256.0	-	-	-	-	38	87.0	13	163.4	5	0.8	1	4.8

«Փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների ու վարձակալված տարածքների մասնավորեցումն ըստ շրջանների 2012թ. հուլիսի 1-ի դրությամբ

Շրջաններ	Օբյեկտների քանակն ըստ ծրագրի	Գնահատված օբյեկտների քանակը	Մասնավորեցված օբյեկտների քանակը	Մեփականաշնորհման ծրագրի կատարողականը, %
<b>Ընդամենը</b>	<b>1182</b>	<b>1223</b>	<b>1171</b>	<b>99.1</b>
այդ թվում՝				
ք.Ստեփանակերտ	697	699	694	99.6
Ասկերան	79	83	78	98.7
Հաղրուք	36	40	36	100.0
Մարտակերտ	130	134	127	97.7
Մարտունի	120	130	118	98.3
Շուշի	119	136	118	99.2
Քաչաքաղ	1	1	-	-

Մասնավորեցված օբյեկտների կառուցվածքն ըստ շրջանների 2012թ. հուլիսի 1-ի դրությամբ



Ինչպես նկատվում է աղյուսակում բերված տվյալներից և գծապատկերից, Ստեփանակերտ քաղաքը առաջնային դիրք է զբաղեցնում մասնավորեցված օբյեկտների կշռով՝ 59.3 տոկոս:

Հանրապետությունում մասնավորեցված 1171 «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների արժեքը կազմել է 1087.1 մլն դրամ, որից 2012թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական և համայնքների բյուջեներ մուծվել են 704.1 մլն դրամը կամ ընդհանուր արժեքի 64.8 տոկոսը: Մասնավորեցված օբյեկտներից 1117-ի գծով մուծումները լրիվ կատարվել են:

**1.6.2. Կազմակերպությունների (ընկերությունների) մասնավորեցում**

2012թ. հուլիսի 1-ի դրությամբ մասնավորեցման ենթակա 104 կազմակերպություններից մասնավորեցվել են 71-ը, որից 22.5 տոկոսը կամ 16-ը՝ շինարարությունում, 16.9 տոկոսը կամ 12-ը՝ սննդի արդյունաբերությունում:

Մասնավորեցված կազմակերպություններից 39-ը մասնավորեցվել է ուղղակի վաճառքով, 18-ը՝ մրցութային վաճառքով, 14-ը՝ անհատույց կարգով:

**Կազմակերպությունների (ընկերությունների) մասնավորեցման ընթացքը**

Ելույթ	Նախատեսված է ծրագրով	Գնահատված է		Մասնավորեցված է		Մուծված է պետական բյուջե, մլն դրամ	
		քանակը	արժեքը, մլն դրամ	քանակը	արժեքը, մլն դրամ	ընդամենը	այդ թվում՝ 2012թ. հունվար-հունիս
<b>Ընդամենը</b>	<b>104</b>	<b>86</b>	<b>4110.0</b>	<b>71</b>	<b>3568.2</b>	<b>1016.4</b>	<b>4.2</b>
այդ թվում՝							
Էներգետիկա	4	1	6.9	1	6.9	2.1	-
Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն	4	4	345.9	2	64.8	27.6	1.6
Թեթև արդյունաբերություն	7	6	485.7	6	485.7	143.4	2.6
Սննդի արդյունաբերություն	13	13	991.9	12	989.5	337.8	-
Շինարարություն	18	17	652.7	16	649.4	175.9	-
Շինանյութերի արտադրություն	4	3	696.7	3	696.7	166.7	-
Գյուղատնտեսություն	3	3	71.0	2	66.9	1.1	-
Ճանապարհաշինություն և շահագործում	5	5	126.4	4	95.1	25.5	-
Ավտոմոբիլային տրանսպորտ	6	6	116.5	1	64.7	-	-
ՆՏՄ	10	7	175.6	6	140.6	44.1	-
Կոմունալ տնտեսություն	14	6	101.1	6	101.1	16.9	-
Առողջապահություն	3	3	49.5	2	29.1	16.7	-
Զբոսաշրջիկություն	1	1	5.6	1	5.6	4.3	-
Այլ ճյուղեր	12	11	284.5	9	172.1	54.3	-

Կազմակերպությունների մասնավորեցումից մուտքերը կազմել են 1016.4 մլն դրամ կամ մասնավորեցված օբյեկտների արժեքի 28.5 տոկոսը:

2012թ. հուլիսի 1-ի դրությամբ հանրապետությունում մասնավորեցվել է 70 կազմակերպությունների կազմից առանձնացված կառուցվածքային միավորներ, որից 15-ական՝ թեթև և էլեկտրատեխնիկական արդյունաբերության, 6-ական՝ գյուղատնտեսության և կոմունալ տնտեսության, 4-ը՝ սննդի արդյունաբերության, 3-ական՝ էներգետիկայի և շինանյութերի արտադրության, 2-ական՝ ճանապարհաշինության և շահագործման, ավտոմոբիլային տրանսպորտի, 1-ական՝ առողջապահության, ՆՏՄ, կապ և 11-ը՝ այլ ճյուղերում:

Մասնավորեցված միավորների արժեքը կազմել է 759.7 մլն դրամ, մուծումները՝ 177.4 մլն դրամ, ընդ որում 2012թ. հունվար-հունիսին՝ 5.2 մլն դրամ:

**Կազմակերպությունների (ընկերությունների) կազմից առանձնացված միավորների մասնավորեցման ընթացքը**

Ելույթ	Գնահատված է		Մասնավորեցված է		Մուծված է պետական և համայնքային բյուջե, մլն դրամ	
	քանակը	արժեքը, մլն դրամ	քանակը	արժեքը, մլն դրամ	ընդամենը	այդ թվում՝ 2012թ. հունվար- հունիս
<b>Ընդամենը</b>	<b>75</b>	<b>795.7</b>	<b>70</b>	<b>759.7</b>	<b>177.4</b>	<b>5.2</b>
այդ թվում՝						
Էներգետիկա	3	8.7	3	8.7	2.6	-
Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն	16	241.8	15	236.3	47.1	2.7
Թեթև արդյունաբերություն	15	67.6	15	67.6	25.9	0.6
Սննդի արդյունաբերություն	5	8.1	4	7.7	5.0	-
Շինանյութերի արտադրություն	3	86.0	3	86.0	35.2	-
Գյուղատնտեսություն	6	82.5	6	82.5	2.5	-
Ճանապարհաշինություն և շահագործում	2	15.6	2	15.6	7.2	-
ՆՏՄ	2	4.3	1	2.4	2.4	-
Ավտոմոբիլային տրանսպորտ	2	17.5	2	17.5	6.3	-
Առողջապահություն	1	0.0	1	0.0	0.0	-
Կոմունալ տնտեսություն	7	200.0	6	175.2	26.4	-
Կապ	1	0.3	1	0.3	0.0	-
Այլ ճյուղեր	12	63.3	11	59.9	16.8	1.9